

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлис. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

Армянская газета „МШАКЪ“ печатаетъ объявленія на армянскомъ, русскомъ и иностранныхъ языкахъ.

ПЛАТА за объявленія на четвертой страницѣ: 2 копѣйки со слова. Съ объявленій печатаемыхъ болѣе десяти разъ, дѣлается уступка 50%.

Плата впередъ.
За ТРАУРНЫЯ объявленія на четвертой страницѣ взимается по 2 рубля.

На первой страницѣ „Мшакъ“ никакія постороннія объявленія не печатаются.

Адресъ: ТИФЛИСЪ, редакція газ. „Мшакъ“.

ԲՈՎԱՆԳԱՌՈՒԹԻՒՆ

Մի նոր օրինադիր անցաթղթերի վերաբերմամբ.
—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց դպրոցների վար-
ժապետները. Նամակ Մեծ-Ղարաբաղից. Նամակ
Ախալցխայից. Ներքին լուրեր.—ՍՍՍՖ.ՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Դրականական իրաւունքը միջադպրոցի
յարարերութիւնների մէջ. Նամակ Թիւրքիայից.
Արտաքին լուրեր.—ԽԱՌՆԻ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱՍԻՒՆԻ-
ՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՊԱՏԱՍԻՒՆԵՐ.—ՑԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.

ՄԻ ՆՈՐ ՕՐԻՆԱԳԻՐ ԱՆԳԱՌՈՒԹԻՒՆ ՎԵՐԱԲԵՐ-
ՄԱՍԻՆ

Ներքին հեռագիրը լուր բերեց մեզ որ
Ֆինանսների մինիստրութիւնը մշակել է
մի օրինադիր, որ և ներկայացնելու է պե-
տական խորհրդի վաւերացմանը և որի
միտքը հետեւեալն է. ամեն մի ուսում-
նական որ դնաւու է արտասահման ե-
րեք ամսով, պէտք է վճարի անցաթղթի
համար 30 ռուբլի ոսկով, ուրեմն մօտ 50
ռուբլի թղթագրանով, իսկ մի ամբողջ
տարվայ համար արտասահման անցա-
թղթի վերջնորդ վճարելու է ֆինանսների
մինիստրութեանը տարեկան 360 ռուբլի
ոսկով, ուրեմն մօտ 700 ռուբլի թղթա-
գրանով:

Դեռ ևս 1883 թվին ֆինանսների մի-
նիստրութիւնը յարուցեց արտասահմա-
նեան անցաթղթերի վճարը աւելացնելու
հարցը, թէև այնքան մեծ վճար չը նշա-
նակեց, ինչպէս ենթադրում է այժմեան
ֆինանսների մինիստրութիւնը, բայց այն
ժամանակ պետական խորհուրդը մերժեց
այդ առաջարկութիւնը և պահպանեց
առաջիկայ կանոնը, որի զօրութեամբ ար-
տասահման գնացող ուսանողները վը-
ճարում է պետական դանձին տարեկան
միմիայն 10 ռուբլի թղթագրան:

Նոր օրինադիրը այն դիտաւորութեամբ
է մշակված, որ արտասահման գնացող և
օտար երկրներում տարիներով մնացող ու
այնտեղ ուսուցող փոքր ծախսող ուսու-
նողները արտաքին չը լինի պետական դան-
ձարանին որ և է շոշափելի հարկ վճարե-
լու պարտաւորութիւնը, բայց հարցը վը-
րանումն է թէ արտասահման գնացող
ուսանողները մեծ մասը արդեօք
այն աստիճան հարուստ մարդիկ են, որ
կարողանան անցաթղթի համար տարեկան
700 ռուբլի վճարել, մասնաւոր եթէ աչքի
առաջ ունենանք որ շատ անգամ գնացողը
մենակ չէ լինում, այլ լինում է ընտանիքի
տէր մարդ, ուրեմն եթէ ճանապարհորդի
ընտանիքը բաղկացած է չորս հոգուց, ար-
տասահմանում մի տարի մնալու և գուցէ
որ և է տկարութիւնը բժշկվելու համար,
նա պէտք է վճարի պետական դանձարա-
նին տարեկան 2800 ռուբլի անցաթղթի
համար:

Յայտնի է որ Նիկողայոս I կայսրի ժա-
մանակ արտասահմանեան անցաթղթը
արժէր Բուստաստանում տարեկան 500
ռուբլի և այն ժամանակ գրեթէ ոչ ոք չէր
վստահանում այդքան մեծ գումար վճարե-
լու արեւմտեան եւրոպա գնալու համար:
Այն ժամանակից որ հնդկացեալ կայսր
Ալէքսանդր II ոչնչացրեց այդ օրէնքը և
միջոց տուեց իր հպատակներին արտա-
սահման գնալու, նրա թագաւորութեան

քսան և հինգ տարվայ ընթացքում բազ-
մաթիւ ուսանողներ ընտանիքներ և ա-
ռանձին անհատներ սկսեցին այցելել օտար
երկրները: Բայց արտասահման գնացողնե-
րի այդ բազմութեան մէջ համեմատաբար
շատ քիչներ էին հարուստ մարդիկ, իսկ
գնացողների մեծ մասը, առւտուրով պա-
րասպող վաճառականներն էին, բժշկվելու
ձգտող անհատներ, ուսումն առնելու կա-
րօտ և զիտութեան ու արհեստների մէջ
կատարելագործվելու նպատակ ունեցող
անձինք էին: Սրանք, որոնք և կազմում են
միջին դասակարգին պատկանող արտա-
սահման գնացողների մեծամասնութիւնը,
երբեք կարող չեն լինի արտասահմանում
մի տարի մնալու համար տարեկան 700
ռուբլի վճարել իրանց անցաթղթի համար:
Այսպիսով ֆինանսների մինիստրութիւ-
նը, որի նպատակն է արտասահմանեան
անցաթղթերի վճարը աւելացնելով մե-
ծացնել դանձարանի եկամուտը, այդ քայլի
անելով անշուշտ կը սխալվի, հասնելով
կատարելագոյն հարուստ հետեւանքներին:
Եթէ ընդունենք որ մինչև այժմ Բուստա-
ստանից արտասահման գնացողների թիւը
իւրաքանչիւր տարվայ ընթացքում հաս-
նում է ամենաքիչը 2000 հոգու, կը
յայտնվի որ նրանցից իւրաքանչիւրը իր
անցաթղթի համար տարեկան 10 ռուբլի
վճարելով պետական դանձարանը արտա-
սահմանեան անցաթղթերից, հազար գնա-
ցողի վրա 10,000 տարեկան եկամուտ ու-
նեն, այն ինչ այժմ, հազար հոգուց հա-
զար մի կամ երկու հոգի միջոց ունենա-
լով տարեկան 700 ռուբլի անցաթղթի
համար վճարելու, նոյն եկամուտը կիջնի
10,000 ռուբլուց մինչև 1400 ռուբլի:

Ուրեմն արտասահմանեան անցաթղթերի
վճարը բարձրացնելով ֆինանսների մինիս-
տրութիւնը ոչ թէ կաւելացնի իր տարե-
կան եկամուտները արտասահմանեան ան-
ցաթղթերից, այլ ընդհակառակը, նշանա-
ւոր կերպով կը պակասեցնի այդ եկամու-
տը, որովհետև արտասահման առաջիկայ
գնացողներից, այդ կարելի է վստահութե-
ամբ ասել, հազար հազարից մէկը կամ
երկուսը միջոց կունենան անցաթղթի հա-
մար տարեկան 700 ռուբլի վճարել, մի
տարի եւրոպայում անցկացնելու նպատա-
կով:

Տեղական „Нов. Обозрѣніе“ լրագիրը
իր այսօրվայ համարի առաջնորդին էլ
նուիրելով անցաթղթերի խնդրի քննու-
թեանը, շատ իրաւացի կերպով նկատում է,
որ անցաթղթերի վրա ենթադրված մեծ
վճարը այն անարդար կողմն էլ կունենար,
որ նա հաւասարապէս վճարման մի և նոյն
չափի է ենթարկում թէ արտասահմանում
իր փոքրը աննպատակ կերպով շուայող,
վստույտ անգործ, հեշտասէր հարուստի, և
թէ չքաւորին, որ ծախսում է իր վերջին
գրօնները՝ կամ ուսում առնելու, կամ իր
խախտված առողջութիւնը վերականգնե-
լու համար:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Մեր թէ գաւառական և թէ Թիֆլիսի ուսումնա-

րանները շատ քիչ ունեն օրինաւոր կերպով պատ-
րաստված վարժուհիներ: Վարժուհի իր բարոյական
յատկութիւններով, մանկավարժութեան և հոգե-
բանութեան հետ իր ծանօթութեամբ ու մտաւոր
զարգացմամբ արժանի պէտք է լինի վարժուհու
վսեմ կոչմանը: Իսկ մեր ուսումնարանների վերա-
բերութեամբ վարժուհին պէտք է լինի այնպիսի
մէկը, որը բացի այն, որ զարգացած է, բարոյա-
կան է և այլն, պարտական է գիտնալ կանոնա-
ւոր կերպով և ուսուցող ու հայոց լեզուները, այ-
նուհետև այժմեան պահանջներին համեմատ
պէտք է անպատճառ ունենայ գիմնադրայի ա-
ւարտման վկայականը: Լինել, օրինակ, հայոց
դպրոցի վարժուհի՝ առանց մի բառ հայերէն գի-
տնալու, ամենակին միտք չունի և բոլորովին ան-
նպատակաւարմար է: Այսպիսի օրինակներ վեր-
ջին տարիներում յաճախ կրկնվում են: Ուսում
աւարտած հայ օրիւրդը վարժուհի է դառնում
հայոց ուսումնարանում, բոլորովին անծանօթ լի-
նելով հայոց լեզուին և նա արդէն վարժուհի
դառնալուց յետոյ է հայոց լեզուով հետաքրք-
վում, արդէն յաճախելով հայոց ուսումնարանը,
իրեն վարժուհի, նա ունի աչքի առաջ և այն, որ
այնտեղ (ուսումնարանում) հայերէն խօսելու հա-
մար կայ լաւ պրակտիկա: Փոխանակ վարժուհի
դառնալուց յետոյ հայոց լեզուն սովորելու լաւ
չէր լինի, որ նա (վարժուհին) գիմնադրայում սո-
վորած ժամանակը օրական մի երկու ժամ դո-
ւէր իր մայրենի լեզուի ուսումնասիրութեան հա-
մար էլ: Դրանով նա աւելի օգուտ բերած կը լի-
նէր թէ իրան և թէ գործին: Երբ նա նպատակ
ունի ծառայելու, քան թէ մի քանի խօսք ֆրան-
սերէն դիտնալով:

Հիմա տեսնենք թէ ինչ է ներկայացնում գա-
ւառացի վարժուհիների պատկերը: Նրանց պատ-
կերը ընդհանրապէս աւելի ամենախառնակ է.
Նրանք թէ դուրի են մտաւոր պաշարից, թէ
մանկավարժական և հոգեբանական տեղեկու-
թիւններից և թէ ուսուցող ու մայրենի լեզուների
տիրապետելուց: Գաւառացի վարժուհին աւար-
տած լինելով գաւառի ուսումնարանում՝ ամենա-
չնչին ուժիկով (ամսական 15, 20 և մինչև ան-
գամ 10 ռուբլի) արժանացել է վարժուհու կոչ-
մանը, այդպիսիների թիւը գաւառներում շատ և
շատ է: Նրանք դուրս եկած լինելով երրորդ կամ
չորրորդ դասարանից՝ իրանց համարում են դար-
գացած: Նրանց համար չը կայ՝ հետաքրքրվել
մանկավարժութեամբ և կամ աշխատել լայնացնե-
լու իրանց մտաւոր ունի հոգիները: Նրանց մտա-
ւոր զարգացման անխը՝ փոխանակ լուսաւորու-
թեան ճանապարհի վրա առաջ գնալու, հետզհետէ
յետ է դուրսում: Մեր գաւառացի վարժուհու և
հասարակ ուսում չառած գաւառացի աղջկայ
հասկացողութեան, գաղափարների և ձգտումների
մէջ կարելի է նկատել ամենաչնչին դանադանու-
թիւն: Այդպէս մեր գաւառների ուսումնարաննե-
րը վարժուհիների կողմից գնալով են ամենա-
անապահովները զրոյթեան մէջ: Գիմնադրայում ա-
ւարտած հայ աղջիկը չէ գնում գաւառ վարժու-
հութեան պաշտօնով, աչքի առաջ ունենալով
վարժուհու չնչին վարձատրութիւնը: Իսկ գաւա-
ռական ուսումնարանի հոգաբարձութիւնը, խնա-
յելով նիւթական միջոցները, լաւ է համարում
վարձել տեղական վարժուհու, չնչին ուժիկով
քան թէ գիմնադրայում աւարտածին ամսական
50 կամ 60 ռուբլիով:

Այս բոլորից յետոյ ինչ է մնում անել, —պատ-
րաստել ժամանակի պահանջներին համաձայն
վարժուհիներ: Այնպիսիներ, որոնք մտադիր են
հայոց ուսումնարաններում վարժուհի դառնալ,
պէտք է նախ և առաջ ուսումնասիրեն թէ ու-
սաց և թէ մայրենի լեզուն և յետոյ պաշտօն
ստանձնեն: Բայց որովհետև այդպիսի ցանկու-
թիւն յայտնողներ դժուար թէ բաւական թիւով
լինեն, ուսումնարաններում վարժու-
հիւնները, գոյութիւն ունեցող մեր բարեգործա-
կան ընկերութիւնները և ինքը հայ հասարակու-
թիւնը թող հոգայ իր ուսում առնող սերունդի
համար վարժուհիներ պատրաստելու: Հայոց Բա-

րեգործական ընկերութեան կողմից այդպիսի մի
միտք յայտնված էր «Մշակի» № 22-ի մէջ, այ-
սինքն պահել երկու որդեգրուհիներ Թիֆլիսի ի-
գական գիմնադրայում, միայն այն պայմանով,
որ նրանք (որդեգրուհիները) վերջապահ լինեն
հայոց ուսումնարանում: Լաւ միտք է, բայց մի-
թէ երկուսով կարելի է ցափն դարձնան անել:
Այդ պատճառով լաւ կը լինէր որ մեր ուսումնա-
րանների վարժուհիները և ուսուցող անձինք հե-
տեւին այդ միտքին և պահէին որդեգրուհիներ, ո-
րով նրանք մեծ օգուտ բերած կը լինէին կրթու-
թեան գործին:

Մի երկու խօսք ևս: Վերև ինչեցինք թէ ինչ
տեղում պատկեր է ներկայացնում գաւառացի
վարժուհիների դրոյթիւնը, ուրեմն պէտք է նը-
րանց զրոյթեան բարեւոյթման մասին ևս հոգալ:
Լաւ կը լինէր եթէ Բարեգործական ընկերութիւ-
նը երկու որդեգրուհիներից մէկին ընտրէր միշտ
գաւառացի, հայոց ուսումնարանում աւարտած
աղջիկներից:

Յանկանում ենք աղոյթութիւն Բարեգործական
ընկերութեանը իր ձեռնարկութեան մէջ և յոյս
ունենք, որ նա իր հետեւողները կունենայ:

Նուարդ

ՆԱՄԱԿ ՄԵՏԵՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻՑ

Մարտի 16-ին

Ունենալ դեղատոն, ունենալ երկու հայ բժիշկ
և հիւանդութեան ժամանակ անպաշտպան մնալ,
դա կատարեալ տարաբարբոթութիւն է մեր հասա-
րակութեան համար: Ութ տարի առաջ երբ կա-
ռավարութիւնը մեր գիւղի կլինայական պայման-
ները բարեկալից դանկտել հիմնեց մեզանում գիմ-
նաւարան հիւանդանոց, ցնծութեան աղաղակներով
ողջուցողըք որա բայցուհի: Մահը չը փութու-
մեր բոլոր յոյսերը դրականապէս արդարացրին
նախկին բժիշկները իրանց գովելու ժողովրդա-
նութեամբ: Կրօնականիսի, Տիւնիկիսի, Տարասով, ահա
այն բժիշկները, որոնք իրանց բարեխիղճ գործու-
նէութեամբ և անշահասիրութեամբ շատ անգամ
հիացումն էին պատճառում մեզ և որոնց անուն-
ները ամենայն յարգանքով և երախտագիտական
զգացմունքով յիշում է մեր ժողովուրդը: Հասարա-
կութեան առաջ նրանց դուները միշտ բաց էին,
հարուստ թէ աղքատ երբ և կամենային՝ աղատ
մուտք ունէին նրանց մօտ. ամեն տեղ հանում, և
ամենին բժշկական օգնութիւն էին հասցնում:
Այցելութեան վճարի մասին ոչ մի խօսք. չորհա-
կարութեամբ ստանում էին, ինչ որ տալիս էին, ա-
ռանց նայելու անգամ և մենք չենք յիշում մի
որ և է անբաւականութեան դէպք այդ մասին, չու-
նեղները բոլորովին աղատ էին վճարից: Երբեք
չենք մոռանալ որ Կրօնականիսի համարեա Վարա-
բիլիսա մտած օրից առաջարկեց տանուտէրին
տալ նրան չուներ դասակարգի անուանացուցա-
կը, որպէս զի կարող լինի հարկաւոր դէպքում
իր օգնութիւնը հասցնել, որին և հաւատարմութիւն
նրանց մշտապէս, նոյն պէտք է ասել և միւսների
մասին: Բայց մենք դուրս էինք, որ մի օր փիլիսո-
փայի լապտերով պէտք է որոնենք այդ բարեխիղճ
անձնաւորութիւններին, որոնք այնքան բարիք
հասցրին մեր հասարակութեանը և շատերին ա-
ղատեցին ակներև մահից: Յաւաք սրտի պէտք է խօս-
տովանել, որ մեր նախազգացումը իրականացած
ենք տեսնում: Այսօր մի չնախկին պատուաբ
բաժանում է մեզ դեղատոնից իր յարգելի բժիշկ-
ներով, այդ բարերար հիմնարկութիւնը կարծես
այլ ևս գոյութիւն չունի մեզ համար և մենք գրե-
թէ մոռացութեան ենք տուած, որ մեր գիւղում
կան՝ դեղատոն և բժիշկներ, այն ևս հայ: Հիւան-
դացան, ոչ մի օգնութիւն մի յուսար, կամ
շատ շատ կրտսեր բժիշկը բարեբաղութիւնից ե-
րեմն ձեռն համար կայցելէ ձեռ (աւագ բժիշկը
հարկաւոր է համարում իր գիտութիւնը և անձ-
նաւորութիւնը կղկղացած պահել մեզ նման հա-
սարակ մահկանացուներից) և բարոյապէս միւ-
թարկելով մի քանի բժկական խորհուրդներ
տալով, կը հեռանայ: Ուրիշ ինչ կարող է անել

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская ул. д. каз.